

Dieu par l'homme comme l'achèvement de toute la philosophie. Cette idée, que Dawit' héritait de la philosophie néo-platonicienne, était intimement liée dans la tradition chrétienne à celle de la «divinisation» de l'homme par l'œuvre du Christ et à travers son imitation.

L'A. considère ensuite quelques uns des principaux représentants de la littérature cultivée du Moyen Age, comme les catholicoi Nersēs Šnorhali et Grigor Tlay, pour vérifier, surtout dans leur poésie, les références à Dawit'. Aussi l'attention de l'A. est attirée par la poésie didactique dont N. Šnorhali fut l'un des plus éminents culteurs en Arménie. Après lui et sur ses traces, à part Grigor Tlay déjà mentionné, fleurissent des poètes didactiques de valeur, tels que Movsēs Erznac'i, disciple de Gēorg Skewrac'i, Smbat le Connétable, et plus tard, au XVIII^e siècle, au moment de la Renaissance arménienne, Xaç'atur Erzrumec'i, Pahtasar Dpir, Mesrop Ganjakec'i, Petros Ľap'anc'i, Petros Naxijewanc'i, Simēon Erewanc'i et d'autres, dont les œuvres sont pleines de références explicites ou implicites aux écrits et à l'enseignement de Dawit'.

L'A. consacre une attention particulière aux traditions et aux légendes, dont quelques unes faisant partie du patrimoine de la culture populaire, relatives à Dawit', ainsi qu'à Movsēs Xorenac'i qui fut, selon la tradition, son compagnon d'études à Athènes. L'appellatif d'Invincible et les récits sur les discussions soutenues par Dawit' avec les philosophes grecs, d'où il sort toujours victorieux, sont un écho précieux du haut prestige dont jouissait le philosophe arménien.

Dans la deuxième partie de son étude l'A. s'arrête surtout sur la figure de Xaç'atur Erzrumec'i ou Karnec'i, surnommé aussi Ařak'elian, qui cultiva une poésie didactique aux plus amples dimensions, en traduisant en vers presque tout le savoir classique transmis par le Moyen Age, sans rester insensible aux suggestions de «l'illuminisme bourgeois». Ayant fait encore quelques allusions à la littérature exégétique autour du corpus dawit'ien, l'A. conclut cette ample revue sur la littérature didactique en Arménie, en soulignant certaines influences que l'œuvre de Dawit', et surtout la tradition éthico-philosophique qui se rattache à lui, ont pu exercer sur la pensée naissante de la libération arménienne au XVIII^e siècle.

ԻՆՏՐԱՅԻ «ՆՈՃԱՍՏԱՆ»Ը*

«Ներաշխարհ» էն անցքը դէպի «Նոճաստան»ը¹, անցնիլ մըն է տիեզերքի անսահման շրջածիրէն՝ մեռելական իրականութեան մը, տիեզերական համանուագէ մը՝ մահաշունչ եղերերգի, բղխած նոճի-ներու աստանդական տառանումներէն՝ արդիւնք հոյիւն քունութեան: Ինտրա կ'ունկնդրէ այդ մահերգը զգալով անոր սարսուռը, որ կարծես հեւքն է նոճիներու թխորակ միայնութեան, ու այսպէս կը հաղորդակցի գոյութեան եւ մահուան խորհուրդներուն, դժբախտաբար առանց թափանցելու անոնց էութեան մէջ: Կը դգայ ինքզինքը սոսկ մարդ մը, նետուած այս հողոտ երկրի վրայ՝ փնտռելու համար նըպատակ մը, որ միշտ կը խուսափի իրմէ. կեանքն ալ իր վաղանց-կութեամբ որեւէ փայփայող գաղափարական չի պարզեւեր: «Ներ-կութեամբ որեւէ փայփայող գաղափարական չի պարզեւեր: «Ներ-աշխարհ»ին մէջ անսահման հորիզոններ կը յայտնուէին հեղինակին բոցանշտլլ լոյսով, հիմա նոճիներու պուրակի մը սահմանափակ յուշ-բոցանշտլլ լոյսով, հիմա նոճիներու պուրակի մը սահմանափակ յուշ-արձանն է, ուր կ'ամփոփուի բնութիւնը եւ մարդկային միտքը. բայց նոյնքան սիրելի կը գառնայ քերթողին՝ որքան Սեւ Ծովի անեղորո-թիւնը. որովհետեւ նոճաստանի ծառերը կ'ըլլան իր մէջ ստեղծողը նոր տրամադրութիւններու եւ հոգեվրճակի, ծնունդ տալով բանա-ստեղծական նոր աշխարհի մը: Փնքը հոն կը փնտռէ տարբեր զգա-ցումներ, զգացողական նորութիւններ ու պատկերացումներ՝ անոնց-մով լիանալու եւ ոգեւորուելու:

*) Յետ մահու հրատարակուող այս յօդուածը գտնուած է Հ. Կ. Քիպարեանի թղթադրանքներուն մէջ: Ձայն մամուլի կը յանձնենք նոյնութեամբ ինչպէս որ գտած ենք իր վերջին խմբագրութեամբ, որու նախընթաց հանդրուաններու նախարտականքն ալ հեղինակը պահեր է: Թէեւ որեւէ ցուցմունք չունինք գրու-թեան թուականի մասին, կը խորհինք որ շարագրութեամբ ըլլայ հեղինակին իմ-տրայի «Ներաշխարհը» ուսումնասիրութենէն ետք (Տե՛ս «Բազմավէպ» ձԸ տրայի (1972), էջ 431-443), եւ անշուշտ ոչ շատ ուշ վ. Կիրակոսեանի «Ինտրայի ստեղ-ծագործութեան գրապատմական արժէքը» յօդուածին հրեւումէն («Բանբեր Ե-րեւանի Համալսարան», 1972, Թ. 3, էջ 211-214), որուն կ'ակնարկուի այստեղ: Կարելի է ուրեմն ներկայ յօդուածին գրառումը դետեղել 1973-74ի ընթացքին: 1. ԻՆՏՐԱ, Նոճաստան, Կ. Պոլիս, հրատ. Յ. Մատթէոսեան, 1908, էջ 46:

Ինտրա իմաստասեր մը չէ, փիլիսոփայական տեսութիւններէ բուն չ'առաջնորդուիր, այլ կը հետեւի կեանքի քայլերուն, ու ամէն ինչ կը ներկայանայ իրեն՝ իբր կեանքը կազմող ու ստեղծող իրողութիւն, նոյնիսկ իբր իմացական տեսութիւն եւ դրութիւն. մտածող էակին ամէն նիւթ կրնայ պարզեւել լոյս եւ ներշնչում. հետեւաբար ասելով է փնտնել ու գտնել իր մէջ «միստիցիզմ, պանթէիզմ, պեսիմիզմ»², իբր որոշեալ եւ կազմաւորեալ մտորումներ, այլափոխելով բանաստեղծին բնածին դիմադրիծը:

Ինտրա՝ բանաստեղծ ու մարդ, կը դդայ իր մէջ ծայրագոյն զգայնութեամբ մարդկային կեանքին լրիւ էութիւնը կազմող ցաւին ու երջանկութեան պայքարը, ու ասոր բոլոր տարրերը մարդուն կենցաղին մէջ: Կը ջանայ նաեւ աւելի մարդկայնացնել բնութիւնն ալ, քան թէ աստուածացնել: Կարելի ալ չէ ըսել թէ ժամանակի քաղաքական պայմանները ուղղակի պատճառ եղած ըլլան իր բանաստեղծութեան ստացած նկարագրին, որ աւելի լալիս մըն է իր ներքին յուզական վիճակներուն: Ասկից այնքան խորապէս կը զգացուի «Նոճաստան»ի մէջ ալ հեղինակին անձնականութիւնը. որով ճշդօրէն չեմ համարիր հետեւեալ բացատրութիւնը, թէ այդ բանաստեղծութեամբ հեղինակը «ուրուագծում է բունատիրութեան տասնամեակի արեւմտահայ պոէզիայի էական հակասութիւնները»³: Նկատել՝ որ այդ տարիներու ընթացքին հրատարակուած են արդէն Մեծարեցի, Վարուժանի, Սիւսանթոյի քերթողական դործերու մեծ մասը:

Ինտրա սիրած է միշտ նոճիները. բայց հիմա այդ ծառերը ո'չ միայն պարզ խորհրդանիշ են անտես իրերու գոյութեան եւ պատկերացումը՝ հողեկան ապրումներու, այլ նաեւ ինքնին նոյնացումը՝ բանաստեղծի անձին: Ինք կ'ապրի կարծես նոճիներու «խաժ լաղուարդ» կանաչութիւնը, անոնց թախծոտ սօսափիւնը, ու անոնցմէ ծաւալած բուրումը կ'օժէ իր ամբողջ էութիւնը: Նոճին ճշգրտօրէն ու քերական կերպով կը պատկերացնէ իր «հողին»: Լքած է այլեւս ծովուն անեղրութիւնը, լոյսին շառայլը, հովին տոնացող էրգը, ու ընկղմած՝ նոճիներու թխաթոյր զանգուածին մէջ, կը փնտնէ մեռած կեանքերու վերածնունդի խորհուրդը եւ հողոյ նոր գոյալիճակի մը տեսանելի պատկերը՝ փոխանակ համափիւռ հորիզոններու: Բանաստեղծը կը սիրէ թափառել նոճիներու «պաղպաղուն աղջին» մէջ, մարմնող արփիներու շառագոյն բեկբեկումներու նման դողահար փնտռողքի մէջ նորանոր վիճակներու:

2. Վ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Իմտրայի ստեղծագործութեան գրապատմական արժէքը, «Բանբեր երեւանի Համալսարանի», 1972, Թ. 3, էջ 211-214:

3. Վ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Անդ, էջ 214:

Այդ վիճակներէն կը ծագին «Նոճաստան»ի քառասուն փոքր հընչեակները, մեծ մասով գրուած 1904-6 տարիներուն եւ տպագրուած 1908ին, նուիրելով հանդուցեալ մօրը յիշատակին, իբր նշան իր որդիական սիրոյն՝ հանդէպ

«Գիթած ու ներող» մայրիկին,
«որ օրրեց զիս երբեմն,
իւր երկնանուէր խաղաղածո՛ւսի յոյգերով...»:

Սիրոյ ձօն մըն է այն մօր, որ

«կը ժարտի, կը խայտայ, կու լայ, կը խօսի ու կը մտմտայ
իմ մէջս, ու քնարիս մըմունքներուն մէջ,
եւ կը թեւածէ, կը հանդէպ ի յաւիտենական տեսլականն, ի Տէր,
Ձօն նոճեղալար եւ նոճեսօսափ սիրոյ...» (էջ 3):

Ինքնուրոյն նկարագրով եւ գլխաւուն ձօն մը, իր անհունօրէն սիրած ու պաշտած նոճիներէն լալիս, իբր հողեղունք երգ՝ անդորրացնելու համար մօրը հողեղէն նշխարները:

Հատորը կը բացուի 1905 Նոյեմբերին գրուած հնչեակով մը, որ հաւանօրէն նկատուած է հեղինակէն իբր նախադուռ բոլոր քերթողութեաններուն: Այդ քերթուածով կը կատարէ Ինտրա իր վերադարձը թուածներուն: Այդ քերթուածով կը կատարէ իր մէկ բնական վայրը: Նոճիներու պուրակին, որ նախապէս եղած էր իր մէկ բնական վայրը: Հիմա տարիներ յետոյ կը վերադառնայ հոն, բայց հողեկան չարաձիւմ վիճակով. կու գայ շնչելու անոր տրտում «վերացման խունկը», ամոքելու համար իր տառապած սրտին ամեհի ցաւը:

«Քանզի հսկայից սրտին ես ցաւը կ'զգամ,
Յորչափ կը մտածեմ թէ վէս հողի թրթռալար՝
ի'նչ անժառանգեալ մ'եմ հեռանշոյլ ձգմարտին» (4):

Անստեղծ ձգմարտութեան հեռուոր դադափարն է, որ իբր թեւածող ոգի, իբր մտածումի շունչ, իբր շնորհք ու փայլ Գեղեցիկին՝ կ'երեւութանայ իրեն հեռուոր երկնքէ մը, բայց չի թափանցեր բակ'երեւութանայ իրեն հեռուոր երկնքէ մէջ, որով կը գլխաւոր «անժառանգեալ» նաստեղծին մտքին եւ էութեան մէջ, որով կը գլխաւոր «անժառանգեալ» մ'ըլլալը: Այս տեսութիւնն է որ կը ծնանի իր մէջ այդ ամեհի ցաւը՝ արնշուկութեամբ հսկաներու ցաւին, ինչպէս Պրոմէթէոսի՝

«... հսկայից սրտին ես ցաւը կ'զգամ».

խռովող եւ սպառնիչ ցաւ մը Ինտրայի համար, որովհետեւ «Նոճաստան»ի մէջ այդ տառապանքին բնոյթը եւ թիրտ ուժգնութիւնը պի-

4. ԻՆՏՐԱ, Ներաշխարհ, «Վերադարձ», էջ 5:

յաճախ իրարու յօդաւորման. կարծես ամէն ինչ արձագանդն է բանաստեղծին յուզեալ եւ ցաւատանջ հոգեբանութեան:

Վ. Հիւկոյի բացատրութեամբ՝ բանաստեղծութիւնը հողիին խորքէն բղխածն է: Անշուշտ արտաքին երեւոյթներն ալ եւ բնութեան իրերը յաճախ աղբիւր են բանաստեղծութեան, բայց երբ քերթողը կը գտնէ անոնց մէջ ներկայութիւնը աղբու եւ խորհրդաւոր զօրութեան մը՝ որ իր կենսունակութեամբ կարենայ բեղմնաւորել եւ կենդանացնել գաղափարական աշխարհ մը, եւ կամ ստեղծադործէ անընթացին պատկերացում մը: Անուշխն այս փթթումը կրնայ ընծայել բանաստեղծութեան հասունութիւն եւ ոգեւորութիւն՝ ձգտելով Յաւերթութեան, հմայուած անոր առինքնող կեանքէն եւ լոյսէն: Բանաստեղծութիւնը լոկ զգացողութիւն, զգացում կամ պատկեր չէ անշուշտ, այլ կը պահանջէ ներքին հայեցողութիւն մը, նկատելով զգալիէն անդին գոյութիւն ունեցող խորհուրդը. լոյս, գոյն, պատկերացում պիտի յղողութիւն այդ խորհուրդին կենսատու շունչով, շնորհելու համար քերթուածին՝ բանաստեղծութեան պարզեւր: «Նոճաստան»ի հնչեակներուն մէջ նուազ է այս կենսահիւթը եւ շունչը: Այդ քերթուածները աւելի կը ներկայանան իբր թատերաբեմը հեղինակին նուաղկոտ յոգեբուն, զինքը տառապեցնող խոկերուն, իր յուսախաբութեանց, տարտամ տենչերուն եւ երազկոտ ցնորքներուն՝ մահուան թախծութեամբ քողարկուած. եւ անոնց մէջ կը շրջմովի բանաստեղծ մը՝ իբր կիսաստուեր ցայդի մը մէջ. աստղերու կայծակտուքն ալ անկարող կ'ըլլայ քաղցրացնել իր սիրտը ու պայծառացնել հորիզոնը: Իսկ նոճիններն ալ, ոչ թէ լոկ գերեզմաններու ներկայութեան նշանակը կ'ըլլան, այլ կը կազմեն ոգեղէն աշխարհ մը, որոնք մեծապէս սիրելի են քերթողին, վասնոր անոնց ճամբով կրնայ գտնէ հաղորդակցիլ հանգուցեալներու հոգեվիճակին, միաժամանակ եղբայրակցելով նոճիններու կեանքին: Այս իրողութիւնն է որ «Նոճաստան»ի կ'ընծայէ բանաստեղծական երանգաւորում, ինչպէս նաեւ անընթացին մթնոլորտ մը:

Հ. ԿԻԻՐԵՂ ՔԻՊԱՐԵԱՆ
(յետ մահու հրատարակութիւն)

Résumé

LE «NOJASTAN» D'INDRA

P. GIWREL KIBARIAN

C'est un écrit posthume du regretté Père Kibarian, trouvé parmi ses feuilles après sa mort et rédigé probablement dans les années 1973-74.

L'A. commence par décrire le passage d'Indra du «Nerašxarh» (Monde intérieur) au «Nojastan» (La Cyprière), comme le passage d'une symphonie cosmique à une élégie funèbre. A travers ces cypres le poète cherche à se mettre en communion avec le mystère de l'existence et de la mort, dont il ne parvient à saisir l'essence. Indra n'est pas un philosophe, mais simplement un poète pour qui toute matière peut offrir un horizon de lumière et d'inspiration. Mais ce serait une fausse perspective que de voir chez lui une théorie précise et bien définie qu'elle soit de «mysticisme, de panthéisme ou de pessimisme». Au contraire, son rapport avec la nature révèle une tendance plutôt à humaniser qu'à diviniser la nature. L'A. prend ses distances aussi à l'égard de ceux qui voudraient voir dans la poésie d'Indra un écho direct des bouleversements politiques de la «décennie de tyrannie». Pour lui cette poésie a un caractère éminemment personnel; elle est avant tout l'écho de l'univers intérieur du poète. Il faut rappeler que durant la décennie en question une bonne partie de la production de poètes tels que Mejarenc', Varužan, Siamant'ō, avait déjà été publiée.

Le sentiment de la douleur chez Indra a une origine différente de celle des romantiques ou des symbolistes. Pour ces derniers la douleur a des racines existentielles comme expression même de l'ennui, de l'anxiété, de la désespération de l'individu qui se sent incapable et impuissant à résister. La douleur naît en Indra de sa crise intellectuelle, de ses recherches insatisfaisantes, de son trouble intérieur que lui inspire l'idée du néant après la mort. C'est là la racine de ces tendances à la désespération et au pessimisme. D'autre part son esprit est toujours fasciné par la charme de l'Absolu, de l'Au-delà, de l'Eternité, sans cependant parvenir à en construire un univers spirituel. Mais on pourrait dire, conclut l'A., que cet univers spirituel était formé par ces cypres que le poète aimait si tendrement, puisqu'il pouvait par leur médiation entrer en communion avec les défunts, partageant, en même temps, comme un frère, la vie des cypres. C'est cette réalité qui donne au «Nojastan» sa couleur poétique ainsi qu'une atmosphère de rêve.